

ՀՏԴ 581.4

Բուսաբանություն

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԼՈՐԱՅԻ ՇՈՒՇԱՆԱԶԳԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ Մայր ԾԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ շուշանագիներ, դեղաբույս, սննդային, դեկորատիվ բույսեր, արևալ:

Ключевые слова: лилейные, лекарственные растения, съедобные дикорастущие растения, ареал

Keywords: Liliaceae, medicinal plant, nutritional ornamental plants, area

М. Цатурян

Распространение разновидностей семейства лилейных флоры Нагорно-Карабахской Республики

В результате полевых исследований и изучений были выявлены четырнадцать видов растений, принадлежащие семейству лилейных. Были выявлены ареалы распространения на территории НКР многочисленных видов, принадлежащих этому богатому ботаническому семейству, а также возможные последствия, возникшие в результате непрерывного их использования человеком, и необходимость мероприятий, которые потребуются для сохранения этого богатого биоразнообразия. Данная работа имеет также познавательное значение для общества любителей растений.

M. Tsatryan

Spreading of the Species of the Liliaceae Family of the Flora of the Nagorno-Karabakh Republic

As a result of field researches and studies, the fourteen botanical species, belonging to the Liliaceae family, were revealed.

The areas of spreading of numerous species, belonging to that rich botanical family on the NKR territory, were found out, as well as those possible consequences resulting from an uninterrupted human use of them and the need for measures required to preserve that rich biodiversity. This work also has cognitive significance for the society of plant lovers.

Դաշտային հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են շուշանագիների ընտանիքին պատկանող տասնչորս բուսատեսակներ: Պարզվել են այդ հարուստ բուսաբանական ընտանիքին պատկանող բազմաթիվ տեսակների տարածման արեալները ԼՂՀ-ում, ինչպես նաև մարդու կողմից անընդհատ օգտագործման արդյունքում այն հնարավոր հետևանքներն ու միջոցառումների անհրաժեշտությունը, որոնք պահանջվելու են այդ հարուստ կենսաբազմազանությունը պահպանելու համար: Սույն աշխատանքը ունի նաև ճանաչողական նշանակություն բուսասեր հասարակության և բնակչության համար:

Դաշտային Ղարաբաղի հանրապետությունն /ԼՂՀ/ ունի հարուստ կենսաբազմազանություն, որտեղ իր յուրօրինակ տեղն ու դիրքն ունի բուսական աշխարհը: Սակայն, որքան էլ դա անհավանական թվա, ԼՂՀ ֆլորան ընդհանուր առմամբ, լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի:

Սույն աշխատանքում ներկայացվում են ծածկասերմերի /Angiospermae/ ընտանիքներից մեկի՝ շուշանագիների /Liliaceae/ ընտանիքի տեսակային բազմազանությունը և տարածվածությունը ԼՂՀ-ում:

Նշված ընտանիքին պատկանող ցեղերի տեսակային կազմի վերլուծության համար հիմք են հանդիսացել մեր կողմից կատարված արշավախմբային և դաշտային հետազոտական աշխատանքները ԼՂՀ տարածքում, ինչպես նաև բուսամուշնների հերբարիումային հավաքները: Ուսումնասիրությունների արդյունքում նպատակ ենք ունեցել ստեղծելու սննդային, գեղագարդիչ և դեկորատիվ նշանակություն ունեցող բույսերի արժեքավոր տվյալների բազա՝ ճշտելու նաև տարածման արեալները, կատարելու քարտեզագրում, պարզելու դրանց կենսաբանական առանձնահատկությունները, որոնք հիմք կհանդիսանան արտադրության մեջ ներդրման փորձեր կատարելու համար: Բույսերի տեսակային կազմը որոշել ենք բուսաբանության դասական որոշիչներով [2,3]:

Շուշանագիների ընտանիքը ընդգրկում է ավելի քան 3.5 հազար տեսակներ, որոնք տարածված են երկրագնդի ամենատարբեր բուսաշխարհագրական մարզերում: Կենսական ձևերն են՝ ծառեր,

լիանաներ և կիսալիանաներ, ամենից հաճախ բազմամյա խոտաբույսեր և շատ հազվադեպ՝ միամյաներ:

ԼՂՀ տարածքում մեր կողմից կատարված բուսաբանական ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել է Սոխ տարօրինակ /խազազը/*Allium paradoxum* (M.B.) Don. տեսակը, որը վաղ զարնանը սննդային մեծ արժեք է ներկայացնում: Այն բազմամյա խոտաբույս է, 20-50սմ երկարությամբ: Ունի գնդաձև սպիտակ սոխուկ: Ծաղկացողունը /ծաղկակոթը/սուր եռանիստ է, հիմքում տերևների հետ միասին պատված է լորձանման նյութով: Տերևները մեկական են, երկար, գծանշտարաձև, հարթ, ամբողջանդր: Բազմանում է սոխուկներով: Հարուստ է վիտամիններով, եթերային յուղերով, սպիտակուցներով, ածխաջրերով, հանքային աղերով և այլ նյութերով: Խազազը օգտագործում են թարմ, թթու և աղ դրածի ձևով, սալաթի ու ճաշերի մեջ: Առանձնապես հաճույքով ուտում են աղով համեմած, եփած ու կտրտած ձվի և խազազի խառնուրդը: Խազազը հաճելի է նաև մածնի հետ:

Խազազը ունի բուժիչ հատկություններ: Նրա պարունակության մեջ մտնող ֆիտոնցիդները ոչնչացնում են վնասաբեր միկրոբներին և օրգանիզմը պաշտպանում հիվանդություններից: Դրանով բուժվում է գրիպը, բերանակերպը, շնչուղիների կատարը, ակտիվանում աղեստամոքսային համակարգի գործունեությունը: Ուժեղացնում է հյուսվածքային ու արագացնում սննդանյութերի մարսումը կլրացնում օրգանիզմի վիտամինների և սննդանյութերի պակասը: Սոխ տարօրինակն ունի նաև քնաբեր հատկություն և պատահական չէ, որ քնից առաջ, երբ ուտում են խազազ, հանգիստ քնում են ողջ գիշերը: Այն օգտակար է թշուրյունների և հավի ճտերի համար:

Խազազը հիմնականում կենտրոնացված է անտառային գոտու ստորին հատվածներում՝ Հաղբուրթի և Քաշաթաղի շրջաններում՝ 1000-1200 և 1200-1400մ բարձրություններում, իսկ մյուս շրջաններում՝ 900-1000մ բարձրություններում:

ԼՂՀ ֆլորայում հայտնի է Ծրեշ /*Eremurus*/ ցեղին պատկանող 1 տեսակ՝ Ծրեշ ուշագրավը /*E. spectabilis* M. B./, որը նույնպես վաղ զարնանը սննդային մեծ արժեք է ներկայացնում: Մատղաշ տերևներն ուտելի են: Ուտում են միայն տապակած վիճակում: Հանդիպում է հանրապետության լեռնային գոտիներում /1100-2200մ բարձրություններում/: Աճում է չոր, քարքարոտ, արևատ վայրերում: Նշված բուսատեսակի հերքարիումային նմուշները հավաքվել են Ասկերանի, Մարտունու, Քաշաթաղի շրջանների տարածքներից: Մեղրատու է և գեղազարդիչ: Բազմանում է սերմերով, արմատապարաներով: Հայտնի է շրեշի բուժիչ հատկությունը: Չնայած բույսի պաշարները զգալի են, սակայն բազմակողմանի ու մեծ քանակությամբ օգտագործումը կարող է հանգեցնել տեսակի լրիվ անհետացմանը: Այս բուսատեսակը առայժմ չի մշակվում, չնայած որ մեծ սննդային արժեք է ներկայացնում:

Արցախի ֆլորայում տարածման մեծ արեալ ունի Աստաշուշան լեռնայինը /խնջղոգ/ *Ornithogalum montanum* Cyr./: Հանդիպում է չոր լանջերին, քարերի մեջ, լեռնատափաստաններում, ստորին լեռնայինից մինչև ենթալպյան գոտիների 850-2600մ բարձրություններում: Սննդում օգտագործում են եփած և թթու դրած վիճակում:



Նկ.1 Ա. լեռնայինը /*O. montanum* Cyr./

Արժեքավոր սննդաբուսատեսակ է Ծնեբենկ դեղատուր /*Asparagus officinalis* L./: Աճում է անտառներում, կիսաանապատներում, քարքարոտ լանջերին, ժայռաճեղքերում /750-2200մ բարձրություններում/:

րում/։ Կոճղարմատավոր բույս է։ Նշված բուսատեսակի հերբարիումային նմուշները հավաքվել են Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի շրջանների տարածքներից։

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում գրանցվել է Սագասոխի դեղինը /*Gagea lutea* (L.) Ker Gawl./։ Յոդունը մերկ է, կանգուն, բարձրությունը՝ 15-20սմ։ Ծաղկման շրջանը համապատասխանում է մարտ- ապրիլ ամիսներին։ Ծաղկաբույլը ողկուզանման է, ծաղիկները՝ դեղին։ Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են սոխուկները։ Հանդիպում է լայնատերև անտառներում, հերկած դաշտերում, թփուտներում, լեռնալանջերին։



Նկ.2 Ս. դեղինը /*Gagea lutea* (L.) Ker Gawl/

Վաղ գարնանային բուսատեսակներից է նաև Մկնասոխ սիբիրյանը /*Scilla siberica* Andr./, խոնավասեր բույս է։ Հանդիպում է ԼՂՀ բոլոր շրջաններում։



Նկ.3 Ս. սիբիրյան /*Scilla siberica* Andr./

Մեր հանրապետությունում տարածված է պապլորը, որը տիպիկ հայկական ծաղկաբույս է և լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում։ Մեր ուսումնասիրությունների ընթացքում գրանցել ենք Պապլոր կովկասյան /*Muscari caucasicum* (Griseb.) Baker/, Պապլոր Շովիցի /*Muscari szovitsianum* Baker/, Սոսնովակու /*Muscari sosnowskyi* Schischia/ տեսակները։ Սոխարմատավոր բազմամյա բույսեր են, սակավաթիվ արմատամերձ գծանման տերևներով։ Ծաղիկները մանր են, բուրբուռնավետ, վերին ծաղիկները կապտաներկազույն են, ներքինները՝ վառ մանուշակազույն՝ հավաքված կարճ ծաղկակիրների ծայրին գտնվող բազմածաղիկ, խիտ ողկույզներում։ Արցախի տարածքում վայրի վիճակում հանդիպում է ամենուրեք։

Մեր հանրապետությունում գրանցել ենք վարդակակաչի 2 տեսակ՝ Յուլիայի /*Tulipa Julia* K.Koch/ և երկծաղկավոր /*Tulipa biflora* Pall./։ Յուլիայի վարդակակաչը հավաքվել ենք ԼՂՀ բոլոր շրջանների տարածքներից, իսկ Երկծաղկավոր վարդակակաչը՝ Մարտունու շրջանից։

Շուշանագիների ընտանիքը ընդգրկում է նաև գեղագարդիչ, դեկորատիվ բույսեր՝ Հակինթ արևելյանը /*Hyacinthus orientalis* L./, տարածված է ծաղկագործության մեջ, արմավաշուշանը /*Yucca gloriosa*/, որը որպես գեղագարդ բուսատեսակ աճեցնում են ԼՂՀ բնակլիմայական պայմաններում: Արմավաշուշանը բազմացվում է ինչպես արմատածիլերով, այնպես էլ կտրոններով, որի համար օգտագործվում է բույսի գագաթի մասը: Օգտագործվում են ծաղկային ձևավորումներում, ինչպես նաև գազոնների վրա տնկում են որպես առանձնյակներ:

Մշակության մեջ հայտնի է նաև Հովտաշուշան մայիսյանը /*Convallariamajalis* L./: Այն վայրի վիճակում հանդիպում է Մարտակերտի, Ասկերանի շրջանների անտառներում: Խոնավասեր է, ջերմասեր: Բազմանում է սերմերով, կոճղարմատներով: Մշակության մեջ հայտնի են հովտաշուշանի բազմաթիվ՝ վարդագույն, լիաթերթ, խշոր ծաղիկներով և այլ տարատեսակներ:

Այսպիսով, մեր դաշտային ուսումնասիրությունների արդյունքում գրանցված բուսատեսակների մի մասը սննդային մեծ արժեք է ներկայացնում և բնակչության կողմից օգտագործվում է որպես տերևաբանջար /*Asparagus officinalis* L., *Ornithogalummontanum* Cyr./: Սակայն նշված բույսերից ոչ մեկը մշակության մեջ մտցված չէ: Ուստի կարելի է արտադրական ցանքերում մշակել այդ բույսերը՝ խթանելով տեսակի պահպանությունը, և հարստացնել մշակվող բանջարաբույսերի տեսականին: Ընտանիքը հարուստ է նաև գեղագարդիչ նշանակություն ունեցող մի շարք բույսերով, սակայն ծաղկագործության բնագավառում ներկայումս չի օգտագործվում պապրորը: Մինչդեռ կարելի է բազմացնել՝ տնկանյութը վերցնելով բնությունից: Պիտանի է պարտեզային ձևավորումների համար:

Գրականություն

1. В.А.Петров, Этноботаника Нагорного Карабаха, Баку, 1940.
2. Тахтаджян А. Л., Флора Армении, Ереван, 1980.
3. Новиков В.С., Губанов И.А., Популярный атлас-определитель, Дикорастущие растения, Москва, 2008.
4. Պ.Ա. Ղանդիլյան, Ա.Մ. Բարսեղյան, Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը, Երևան, 1999:
5. Հովհաննիսյան Ջ.Հ., Կանաչ դեղատուփ, Երևան, 2005:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մայա Ծատրյան – ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դասախոս
E-mail: maya.c@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Ա.Ա.Գուլյանը